

Programmatic Cooperation Framework for  
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded  
by the European Union  
and the Council of Europe



EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Implemented  
by the Council of Europe

*EU/CoE Joint Project*  
Promote Professional and Responsible Journalism  
by Supporting Regional Network of Self-Regulatory Bodies

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017Թ. ԱՊՐԻԼԻ 2-Ի  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

*Սույն փաստաթուղթը պատրաստված է Եվրամիության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի ֆինանսական օժանդակությամբ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն կարող ընկալվել որպես Եվրամիության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական կարծիքի արտացոլում:*



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

[www.ypc.am](http://www.ypc.am)

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017թ. ԱՊՐԻԼԻ 2-ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	4
2017թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	5
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	8
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ	29
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	30
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ԴԱՇԻՆՔՆԵՐԸ	37
ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	38
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ (2017թ. ՄԱՐՏԻ 5-31)	40
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՇԵՄ (2017թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15 - ՄԱՐՏԻ 4)	53

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017թ. ԱՊՐԻԼԻ 2-ի

### ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրություններին համապետական ընտրական ցուցակներով մասնակցել է հինգ կուսակցություն և չորս դաշինք:

2017թ. ապրիլի 9-ին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է ՀՀ ԱԺ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքները:

Կուսակցություններին/դաշինքներին տրված ձայները բաշխվել են հետևյալ կերպ (տոկոսներով).

	Կուսակցություն/դաշինք	%
1.	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	49.15
2.	Ծառուկյան դաշինք	27.36
3.	Ելք դաշինք	7.79
4.	«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն	6.57
5.	«Հայկական վերածնունդ» կուսակցություն	3.72
6.	Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան դաշինք	2.07
7.	Կոնգրես-ՀԺԿ կուսակցությունների դաշինք	1.65
8.	«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն	0.94
9.	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	0.75

Այսպիսով, ՀՀ Ազգային ժողով անցել են երկու կուսակցություն և երկու դաշինք, որոնք հաղթահարել են համապատասխանաբար՝ 5 և 7 տոկոսի շեմերը: 105 պատգամավորական մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

- Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 58 մանդատ
- Ծառուկյան դաշինք՝ 31 մանդատ
- Ելք դաշինք՝ 9 մանդատ
- «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն՝ 7 մանդատ:

## 2017Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

### ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**1. Լուսաբանման հավասարակշռություն:** Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հետազոտվող հեռուստատալիքները հարաբերականորեն հավասարակշիռ ուշադրության են արժանացրել խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին: Հատկապես պաշտոնական քարոզարշավի սկզբում, երբ նախընտրական միջոցառումներն այդքան էլ շատ չէին, հեռարձակողները ձգտում էին հավասարակշռությունն ապահովել սեփական նախաձեռնությամբ պատրաստվող ռեպորտաժների և հարցազրույցների հաշվին: Մինչդեռ պաշտոնական քարոզչությանը նախորդող ժամանակահատվածը խիստ տարբերվում էր ընտրապայքարի այս կամ այն մասնակցի լուսաբանման ինտենսիվությամբ: Ընտրությունների նախաշեմին հստակ օրենսդրական կարգավորման և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից մշտադիտարկման բացակայությունը էականորեն սահմանափակում է քաղաքական կուսակցությունների հնարավորությունները՝ քաղաքացիներին իրազեկելու իրենց գործունեության և նախընտրական ծրագրերի մասին: Մինչդեռ շատ ընտրողներ իրենց ընտրությունը կատարում են պաշտոնական ընտրարշավից շատ ավելի առաջ, որը 2017 թվականին սահմանափակվեց ընդամենը 27 օրով: Սա ստիպում է հերթական անգամ ընդգծել կարգավորման և մշտադիտարկման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ հայաստանյան հեռուստատեսությունը քաղաքական բազմակարծության ապահովման կարևորությունը շատ ավելի երկարատև ժամանակահատվածով, քան քարոզարշավի կարճատև, ոչ լրիվ չորս շաբաթը:

**2. Նշանային բնութագրիչներով լուսաբանում:** Քանակական ցուցանիշների հարաբերական հավասարակշռությունը չի տարածվել կուսակցությունների/դաշինքների լուսաբանման բնույթի վրա: Ավելին, համազգային ընտրությունների նախորդ շրջափուլի համեմատությամբ նշանային բնութագրիչներով անդրադարձների քանակն աճել է. 2012թ. խորհրդարանական ընտրություններին այն կազմում էր հետազոտվող հեռուստատալիքների անդրադարձների հանրագումարային թվի 3.5%-ը, 2013թ. նախագահական ընտրություններին՝ 2.2%-ը, իսկ ներկա քարոզարշավի ընթացքում՝ 6.8%: Սա վկայում է որոշակի քաղաքական ուղղվածության մասին և թույլ է տալիս խոսել քարոզարշավի չեզոք լուսաբանման հարաբերական պակասի մասին, հատկապես որոշ հեռուստատալիքներում:

**3. «Տարածքային թեկնածուների» լուսաբանում:** Նախընտրական քարոզարշավի ընթացքում աչքի զարնեց ընտրություններին տարածքային ցուցակներով մասնակցող թեկնածուների համար հավասար պայմաններ չապահովելը: Թեև տվյալ հետազոտության խնդիրների մեջ չէր մտնում այս թեկնածուների լուսաբանման

մշտադիտարկումը, սակայն նրանց համար հեռուստաթերի մատչելիության հարցում հեռարձակողների ընտրողական մոտեցումն ակնհայտ էր: Նման ընտրողական մոտեցումը իրապես կարող էր ազդել տարածքային ցուցակներով ընտրությունների արդյունքների վրա՝ ուղղակիորեն և ընդհանուր արդյունքների վրա՝ անուղղակիորեն:

**4. Պաշտոնատար անձանց լուսաբանում:** Ինչպես և նախկինում էր, հայաստանյան նախընտրական եթերի չլուծված հարցերից է մնում պաշտոնատար անձանց լուսաբանումը՝ ենթադրաբար նրանց կողմից պաշտոնական պարտականություններ կատարելիս: Հաճախ համապատասխան հեռուստանյութը ներկայացվում է որպես ծառայողական գործունեության լուսաբանում, մինչդեռ պաշտոնյան հեռուստակադրում հայտնվում է նախընտրական խորհրդանիշների ֆոնին: Այսպիսով, անտեսվում է այն սկզբունքը, համաձայն որի, ցանկալի չէ, որ նախընտրական քարոզարշավում այս կամ այն կերպ ներգրավված քաղաքական գործիչները՝ որպես պաշտոնատար անձ հաճախակի հայտնվեն հանրության մեջ:

**5. Քաղաքական ուժերի ներկայացվածությունը բանավիճային հաղորդումներում:** Ընդհանուր առմամբ, հետազոտվող հեռուստաալիքները ձգտում էին արտացոլել նախընտրական մրցավազքի մասնակիցների բազմազանությունը, հրավիրելով նրանց «հյուր տաղավարում»/թոք-շոու/հարցազրույց ձևաչափի հաղորդումներին: Սակայն հատկապես պաշտոնական նախընտրական քարոզարշավի ընթացքում, այս ձևաչափի հաղորդումներում նախընտրական պայքարի անմիջական մասնակից չհանդիսացող անձանց՝ փորձագետների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը չափազանց հազվադեպ է եղել: Այս հանգամանքը հանգեցրեց ընտրական գործընթացի, դրա մասնակիցների նախընտրական ծրագրերի վերլուծության և մեկնաբանությունների պակասի, ինչը մի շարք դիտորդներ բազմիցս ընդգծել են որպես քվեարկությունից առաջ ընտրազանգվածի լիարժեք կողմնորոշմանը խոչընդոտող գործոն:

**6. Քաղաքական հեռուստաբանավեճերի բացակայություն:** Շարունակում է լուրջ հիմնախնդիր մնալ հայաստանյան քաղաքական գործիչների ոչ բավարար պատրաստակամությունը՝ եթերում մասնակցելու բանավեճերի, բաց քննարկումների: Հանրային հեռուստառադիոընկերության բազմակի հրավերները նախընտրական մրցավազքի մասնակիցներից շատերի մոտ արձագանք չգտան: Հայաստանյան նախընտրական պրակտիկայի այս ավանդական հիմնախնդիրը առավել հրատապ է դարձնում Երևանի մամուլի ակումբի՝ նախկինում բարձրաձայնած առաջարկությունը՝ օրենսդրորեն ամրագրել բանավեճերին մասնակցելու պարտավորությունը, որպես Հայաստանի հանրային քաղաքականության մշակույթի բարելավման անհրաժեշտ պայման:

**7. Էթիկայի կանոնների խախտումներ արտահայտությունների/տեսադրվագների մակարդակում:** Պաշտոնական նախընտրական քարոզարշավից դուրս քաղաքական մրցակցության կարգավորման մեխանիզմների պակասն անդրադարձել է նաև էթիկայի կանոնների խախտման հաճախության վրա. նախընտրական քարոզարշավին նախորդող հետազոտված երկու շաբաթների ընթացքում էթիկայի խախտումներն ավելի հաճախ են եղել, քան պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում: Ոչ էթիկական արտահայտությունների աղբյուրը մեծ մասամբ եղել են այլ անձինք և ոչ թե՛

հաղորդումը վարողը/նյութի հեղինակները, ինչը որոշ չափով ՁԼՄ-ներին ազատում է պատասխանատվությունից: Մինչդեռ որոշակի հանգամանքներում ՁԼՄ-ները/լրագրողները, եթե նույնիսկ չեն հանդիսանում էթիկայի կանոնների խախտում պարունակող բովանդակության անմիջական տարածողը, չեն կարող դիտարկվել որպես պասիվ, անաչառ կողմ:

**8. Էթիկայի կանոնների խախտումներ ամբողջ նյութի մակարդակում:**

Ամենատարածված խախտումներից մեկը տարբեր հեռուստաալիքներում նախընտրական միջոցառման միևնույն տեսագրության օգտագործումն էր, ճիշտ է, տարբեր տևողությամբ: Մինչդեռ խմբագրական լուսաբանումը պետք է սկզբունքորեն տարբերվի քարոզչական նյութերից, որոնք, որպես քաղաքական գովազդ, տրամադրվում են կուսակցությունների/դաշինքների կողմից: Հեռուստադիտողը ՁԼՄ-ից իրավամբ ակնկալում է ամբողջությամբ նրա սեփական լուսաբանումը և ոչ թե մեկ ուրիշի, օրինակ, նույն կուսակցության/դաշինքի կամ այլ հեռարձակողի կողմից պատրաստված մեկնաբանությունը: Հաշվի առնելով հայաստանյան հեռարձակողների սահմանափակ ռեսուրսները, այսպիսի «բարտերի» բացառումը չարդարացված մաքսիմալիստական մոտեցում կլիներ: Սակայն հեռուստաալիքներին կարելի է խորհուրդ տալ՝ առաջին հերթին հետևել նախընտրական պայքարի բոլոր մասնակիցներին հավասար հնարավորություններ տալու սկզբունքին, այնուհետև՝ առավել ուշադրություն դարձնել նյութերը չեզոք ներկայացնելուն, երրորդ՝ նշել փոխ առնված տեսագրությունների և տեքստերի իրական հեղինակներին:

**9. Երեխաների օգտագործումը քարոզչության մեջ:** Պաշտոնական նախընտրական քարոզարշավի ընթացքում արձանագրվել է 70 նյութ, որոնցում երեխաները հանդես էին գալիս կուսակցությունների/դաշինքների քարոզչական միջոցառումների մասնակցի դերում: Սա հակասում է քաղաքական պայքարի անցկացման միջազգային բոլոր չափանիշներին: Հեռարձակողները միշտ չէ, որ կարող են, առանց նախընտրական միջոցառման մասին պատմող ռեպորտաժին վնաս հասցնելու, բացառել երեխաների մասնակցությամբ դրվագների ցուցադրումը: Այդ պատճառով, սրա պատասխանատվությունն առաջին հերթին կուսակցությունները/դաշինքներն են կրում:

Էթիկական խնդիրների հաղթահարումը պայմանավորված է ՁԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի, ինչպես նաև՝ ընդհանուր առմամբ հանրային քաղաքականության մշակույթի բարելավման անհրաժեշտությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ (2017Թ. ՄԱՐՏԻ 5-31) ԵՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՇԵՄ (2017Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15 - ՄԱՐՏԻ 4)


**ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՈՂԶ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ (մարտի 5-31)**

հետազոտվող հինգ հեռուստաալիքների հանրագումարային ցուցանիշների հիման վրա կարելի է խոսել խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցությունների/դաշինքների նկատմամբ հեռարձակողների հարաբերականորեն հավասարակշիռ ուշադրության մասին: Թեև, ինչպես անդրադարձների հաճախությամբ, այնպես էլ՝ եթերաժամանակով, առաջատարները Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) և Ծառուկյան դաշինքն են եղել, դրա հետ մեկտեղ վերջին տեղը զբաղեցրած Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ), որն այժմ չէր ընկնում ակտիվ ընտրարշավ վարելով, ուներ նրանց հետ միանգամայն համադրելի ցուցանիշներ: Ընդ որում, արժե նշել, որ նույնիսկ այն օրերին, երբ այս կամ այն կուսակցությունը/դաշինքը նախընտրական միջոցառում չէր անցկացնում, հեռուստաալիքները ձգտում էին, հատկապես նախընտրական քարոզարշավի առաջին շաբաթներին, հավասարակշռությունն ապահովել սեփական նախաձեռնությամբ պատրաստվող ռեպորտաժների և հարցազրույցների հաշվին:

**ԳՐԱՖԻԿ 1. Խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցությունների/դաշինքների միջև եթերաժամանակի բաշխումը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում**

2017թ. մարտի 5-31

**Հ1, «Արմենիա», «Երկիր Մեղիա», «Կենտրոն», «Շանթ»**




Այդ իմաստով, տվյալ ժամանակահատվածն էականորեն տարբերվում էր դրան նախորդող երկու շաբաթվանից (*փետրվարի 15 - մարտի 4*), երբ հստակ օրենսդրական կարգավորման և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից մշտադիտարկման բացակայության պայմաններում, լուսաբանման հավասարակշռությունն ընդհանուր առմամբ չէր պահպանվում: Ինչպես անդրադարձների հաճախությամբ, այնպես էլ՝ նրանց հատկացված եթերաժամանակով: Ամենաշատ և ամենաքիչ լուսաբանումն ստացած կուսակցությունների/դաշինքների միջև տարբերությունը մոտավորապես այսպիսին էր՝ 5:1:

**ԳՐԱՖԻԿ 2. Խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցությունների/դաշինքների միջև եթերաժամանակի բաշխումը նախընտրական քարոզչության նախաշեմին**

2017թ. փետրվարի 15 - մարտի 4

Հ1, «Արմենիա», «Երկիր Մեղիա», «Կենտրոն», «Շանթ»



Ընդ որում, ակնհայտ է, որ շատ ընտրողներ կուսակցությունների/դաշինքների միջև իրենց ընտրությունը կատարում են պաշտոնական ընտրաքաղաքական շատ ավելի առաջ, որը 2017 թվականին սահմանափակվեց ընդամենը 27 օրով: Եվ քաղաքական կուսակցությունների համար այդ ժամանակահատվածից դուրս իրենց գործունեության և իրենց նախընտրական ծրագրերի մասին քաղաքացիներին տեղեկացնելու իրավական երաշխիքների բացակայությունը թույլ չի տալիս լիարժեք խոսել ընտրաքաղաքական անցկացման հավասար պայմանների մասին: Սա ստիպում է հերթական անգամ ընդգծել հայաստանյան հեռուստատեսությունն առավել երկարատև ժամանակահատվածով քաղաքական բազմակարծության ապահովման կարևորությունը:


Բացի դրանից, եթե անդրադարձների հաճախությամբ կուսակցությունները/դաշինքները **նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում** ունենին միանգամայն համադրելի արդյունքներ բոլոր հեռուստաալիքներում, ապա եթերաժամանակի ծավալի ցուցանիշները էականորեն տարբերվում էին:

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքում (Հ1) արձանագրվել է ամենափոքր տարբերությունը. եթերաժամանակի ծավալով առաջատար Հայաստանի Հանրապետական կուսակցությունն այս ցուցանիշով վերջին տեղը զբաղեցրած ՀԿԿ-ից առաջ է անցել մեկուկես անգամ:


Ամենամեծ տարբերությունն արձանագրվել է «Արմենիայում», որտեղ ՀՀԿ-ն ստացել է 6.5-ից ավելի շատ եթերաժամանակ, քան «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը: Նույնիսկ այս ցուցանիշով երկրորդ տեղը զբաղեցրած Ծառուկյան դաշինքի նկատմամբ ՀՀԿ-ն այս հեռուստաալիքում կրկնակի առավելություն է ստացել: Ընդ որում, ընդհանուր անհավասարակշռությունն «Արմենիայում» առաջացել է հիմնականում նախընտրական քարոզարշավի վերջին շաբաթվա ընթացքում:

Հ1

2017թ. մարտի 5-31




2017թ. փետրվարի 15 - մարտի 4




«Արմենիա»

2017թ. մարտի 5-31




2017թ. փետրվարի 15 - մարտի 4




«Երկիր Մեդիա»

2017թ. մարտի 5-31




2017թ. փետրվարի 15 - մարտի 4




«Կենտրոն»

2017թ. մարտի 5-31




2017թ. փետրվարի 15 - մարտի 4




«Շանթ»

2017թ. մարտի 5-31



2017թ. փետրվարի 15 - մարտի 4




**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՎՐԱ** չի տարածվել այնպիսի հանրագումարային ցուցանիշների համեմատական հավասարակշռությունը, ինչպիսին են անդրադարձների հաճախությունը և եթերաժամանակի ծավալը: **Նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում** արմատապես հակառակ պատկերն է արձանագրվել ՀՀԿ-ի և Ծառուկյան դաշինքի նկատմամբ դրական և բացասական անդրադարձների հարաբերակցության հարցում. համապատասխանաբար՝ 26:47 (մինուս 21) և 36:6 (պլյուս 30): Ընդ որում, այս տարբերության մեջ ամենամեծ «ներդրումն» ունեցել է «Կենտրոնը», որտեղ ՀՀԿ-ն ստացել է 2 դրական և 22 բացասական անդրադարձ, իսկ Ծառուկյան դաշինքը՝ 24

դրական և զրո բացասական: Կուսակցություններին/դաշինքներին նշանային բնութագրիչներով անդրադարձների համանման իրավիճակ է արձանագրվել «Երկիր Մեդիայում», որտեղ ՀՀԿ-ն ունեցել է 0 դրական և 19 բացասական անդրադարձ, իսկ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը (ՀՅԴ)՝ 12 դրական և 1 բացասական անդրադարձ: Հատկանշական է, որ ՀՀԿ-ի եթերում ՀՀԿ-ն, ընդհակառակը, ընտրությունների մասնակից բոլոր կուսակցություններից/դաշինքներից ամենանպաստավոր լուսաբանման է արժանացել՝ 15 դրական և 2 բացասական անդրադարձ: Հետազոտվող մյուս երկու հեռուստաալիքները՝ «Շանթ» ու «Արմենիան» փորձում էին խուսափել կուսակցությունների/դաշինքների նշանային բնութագրիչներով լուսաբանումից: Որոշ «բացառություն» «Շանթում» արվել է ՀՀԿ-ի նկատմամբ, որի մասին 6 անգամ խոսվել է դրական համատեքստում, իսկ 4 անգամ՝ բացասական: «Արմենիայում» արձանագրվել է ընդամենը 3 դրական անդրադարձ (բոլորն էլ՝ ՀՀԿ-ին) և ոչ մի բացասական անդրադարձ կուսակցություններին/դաշինքներին:

**ԳՐԱՖԻԿ 3. Խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցություններին/դաշինքներին հետազոտված հեռարձակողների անդրադարձների բնույթը քարոզչության ժամանակահատվածում**

2017թ. մարտի 5-31

ՀՀԿ, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ»




Նշանային բնութագրիչներով անդրադարձների տեսանկյունից գրեթե նույն պատկերն է արձանագրվել նաև *սյաշտոնական քարոզչությանը նախորդող ժամանակահատվածում*, ինչը վկայում է առանձին հեռուստաալիքների որոշակի քաղաքական ուղղվածության մասին:

**ԳՐԱՖԻԿ 4. Խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցություններին/դաշինքներին հետագոտված հեռարձակողների անդրադարձների բնույթը նախընտրական քարոզչության նախաշեմին**

**2017թ. փետրվարի 15 - մարտի 4**

**Հ1, «Արմենիա», «Երկիր Մեղիա», «Կենտրոն», «Շանթ»**




Ուշադրության է արժանի համազգային ընտրությունների նախորդ շրջափուլի համեմատությամբ հեռուստատեսության նշանային բնութագրիչներով անդրադարձների աճող քանակը. 2012թ. խորհրդարանական ընտրություններին այն կազմում էր հետագոտվող հեռուստատեսության անդրադարձների հանրագումարային թվի 3.5%-ը, 2013թ. նախագահական ընտրություններին՝ 2.2%-ը, մինչդեռ ներկա քարոզարշավի ընթացքում՝ 6.8%: Բնականաբար, այս թիվը (առաջին հերթին բացասական անդրադարձները) հիմնականում ձևավորվել է միմյանց մասին կուսակցություններին/դաշինքներին ներկայացուցիչների արտահայտությունների հաշվին, սակայն մինևույն ժամանակ հեռարձակողների կողմից այդ արտահայտությունների ընտրությունը կարող է վկայել միտումնավորության մասին և թույլ է տալիս խոսել քարոզարշավի չեզոք լուսաբանման հարաբերական պակասի մասին: Այլ կերպ ասած, լուսաբանման հավասարակշռության աստիճանը որոշելու համար քաղաքական պայքարի մրցակիցներին հատկացված բոլորների և վայրկյանների միայն մեխանիկական հաշվարկը բավարար չէ:

Համադրելով՝ մի կողմից նշանային բնութագրիչներով անդրադարձների քանակը, ինչպես նաև դրական և բացասական համատեքստում այդ անդրադարձների հարաբերակցությունը, մյուս կողմից՝ այս կամ այն քաղաքական ուժին հատկացված


Եթերաժամանակի ծավալը, կարելի է որոշակի եզրակացություններ կատարել այն մասին, թե որքանով է նպաստավոր եղել կուսակցությունների/դաշինքների լուսաբանումը կոնկրետ հեռարձակողի կողմից: Այդ իմաստով, օրինակ, Ծառուկյան դաշինքի «վայրկյանները», մասնավորապես «Կենտրոնում», շատ ավելի էին նպաստում լսարանի կողմից նրա դրական ընկալմանը, քան ՀՀԿ-ի «վայրկյանները»:

Հ1

2017թ. մարտի 5-31




2017թ. փետրվարի 15 - մարտի 4




«Արմենիա»

2017թ. մարտի 5-31




2017թ. փետրվարի 15 - մարտի 4




«Երկիր Մեդիա»

2017թ. մարտի 5-31




2017թ. փետրվարի 15 - մարտի 4




«Կենտրոն»

2017թ. մարտի 5-31




2017թ. փետրվարի 15 - մարտի 4




«Շանթ»

2017թ. մարտի 5-31



2017թ. փետրվարի 15 - մարտի 4



**ՄԵԿ ԱՅԼ ՄԿՁԲՈՒՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ**, որ արձանագրվել է ներկա նախընտրական քարոզարշավում, դարձել է ընտրություններին տարածքային ցուցակներով մասնակցող թեկնածուների համար հավասար պայմաններ չապահովելը: Չնայած այն բանին, որ անվանապես Հայաստանը անցում է կատարել 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի, «տարածքային թեկնածուները» լուծում էին ընտրությունների հետ կապված անհատական խնդիրներ, և երբ նրանցից ոմանք ստանում էին հեռուստաթերթի հնարավորություն (ինչպես համազգային, այնպես էլ՝ մարզային), իսկ նրանց մրցակիցները՝ ոչ, պահանջներ ներկայացնելու բնական հիմքեր էին առաջանում:

Երևանի մամուլի ակումբի կողմից իրականացվող մշտադիտարկման խնդիրների մեջ չէին մտնում տարածքային ցուցակներով առաջադրված այս կամ այն թեկնածուներին անդրադարձների հաճախության, ինչպես նաև՝ նրանց հատկացված եթերաժամանակի քանակական հաշվարկները, սակայն վերը նշված խնդիրը չէր կարող դուրս մնալ ուշադրությունից: Այն իրապես կարող էր ազդել տարածքային ցուցակներով ընտրությունների արդյունքների վրա՝ ուղղակիորեն և ընդհանուր արդյունքների վրա՝ անուղղակիորեն:


Եվս մեկ հանգամանք, որը տվյալ հետազոտության անմիջական առարկան չի եղել, սակայն արժանացել է լայն քննադատության, կուսակցությունների/դաշինքների առաջին համարների ձևաչափով հեռուստաբանավեճերի բացակայությունն էր: Հանրային հեռուստառադիոընկերության բազմակի հրավերները նախընտրական մրցավազքի մասնակիցներից շատերի մոտ արձագանք չգտան: Հայաստանյան նախընտրական պրակտիկայի այս ավանդական հիմնախնդիրը առավել հրատապ է դարձնում Երևանի մամուլի ակումբի՝ նախկինում բարձրաձայնաձայն առաջարկությունը՝ օրենսդրորեն ամրագրել բանավեճերին մասնակցելու պարտավորությունը, որպես Հայաստանի հանրային քաղաքականության մշակույթի բարելավման անհրաժեշտ պայման:

Այս հիմնախնդիրների հետ մեկտեղ հայաստանյան նախընտրական եթերի չլուծված հարցերից է մնում պաշտոնատար անձանց լուսաբանումը՝ ենթադրաբար նրանց կողմից պաշտոնական պարտականություններ կատարելիս: Առաջին հերթին, խոսքը ՀՀ վարչապետ, Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահի առաջին տեղակալ Կարեն Կարապետյանի մասին է, որն ընտրական ցուցակում թեև ներառված չէր, սակայն կրում էր կուսակցության նախընտրական քարոզարշավի հիմնական ծանրությունը: Այն հեռուստանյութերի բովանդակությունը, որտեղ երևում էր Կարեն Կարապետյանը, հաճախ թույլ չէր տալիս տարբերակել՝ դրանք քարոզչական միջոցառման, թե՞ կառավարության ղեկավարի ծառայողական գործունեության լուսաբանում են: Մասնավորապես, սյուժեի տեքստը վարչապետի աշխատանքային այցի մասին էր, մինչդեռ այդ ընթացքում նա հայտնվում էր ՀՀԿ-ի նախընտրական խորհրդանիշների ֆոնին: Այստեղ հերթական անգամ տեղին է նշել այն հայտնի սկզբունքը, համաձայն որի, ցանկալի չէ, որ նախընտրական քարոզարշավում ներգրավված քաղաքական գործիչները՝ որպես պաշտոնատար անձ հաճախակի հայտնվեն հանրության մեջ: Եթե նույնիսկ անմիջականորեն նրանք չեն առաջադրվել:

**ԱՌԱՆՁԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼԻՄ** հարկ է նշել «Կենտրոնի» և «Երկիր Մեդիայի» ավանդական առաջատար դիրքը՝ նախընտրական քարոզարշավների լուսաբանման ինտենսիվության տեսանկյունից: Այս երկու հեռուստատալիքները կուսակցություններին/դաշինքներին և նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին հատկացված եթերաժամանակի ծավալով առաջատարն են եղել ինչպես պաշտոնական նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում, այնպես էլ՝ դրան նախորդող երկու շաբաթվա ընթացքում: Ընդ որում «Կենտրոնը» *փետրվարի 15 - մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում* բոլորից առաջ է անցել նաև նախընտրական պայքարի մասնակիցներին անդրադարձների հաճախությամբ: Նույն ժամանակահատվածում «Շանթը» անդրադարձների հաճախությամբ՝ երկրորդը, իսկ եթերաժամանակով՝ երրորդն է եղել: Հ1-ը և «Արմենիան» միայն *մարտի 5-ից* (նախընտրական քարոզչության մեկնարկ) քիչ թե շատ ակտիվ միացան ընտրությունների լուսաբանմանը, թեև կուսակցությունները/դաշինքները ընտրապայքարի մեջ մտել էին առնվազն դրանից երկու շաբաթ առաջ:

**ԳՐԱՖԻԿ 5. Ընտրարշավի նկատմամբ հետազոտված հեռարձակողների ուշադրության աստիճանը նախընտրական քարոզչության նախաշեմին (եթերաժամանակի ծավալով)**


**2017թ. փետրվարի 15 - մարտի 4**



**Պաշտոնական նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում** հետազոտվող հեռուստաալիքների վերաբերմունքը ընտրությունների նկատմամբ որոշակի փոփոխության է ենթարկվել: **Հ1**-ը եթերաժամանակի ծավալով երրորդն է եղել, սակայն բոլորից առաջ է անցել կուսակցություններին/դաշինքներին անդրադարձների հաճախությամբ, թեև մեկ երրորդի դեպքում դրանք ընդամենը կուսակցությունների/դաշինքների հիշատակումներ էին (հիմնականում, հեռուստակադրում դրանց նախընտրական խորհրդանիշների կամ դեկավարների հայտնվելը՝ առանց լրացուցիչ այլ տեղեկություններ հաղորդելու): Պաշտոնական նախընտրական քարոզչության լուսաբանման ինտենսիվությամբ առաջին եռյակին հաջորդում է **«Շանթը»**: Իսկ **«Արմենիան»** եզրափակում է հետազոտվող հեռարձակողների հնգյակը:

**ԳՐԱՖԻԿ 6. Ընտրարշավի նկատմամբ հետազոտված հեռարձակողների ուշադրության աստիճանը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում (եթերաժամանակի ծավալով)**

2017թ. մարտի 5-31



**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԴԱՇԻՆՔՆԵՐԻ** լուսաբանման հարաբերական հավասարակշռությունն արտահայտվել է նաև այնպիսի ցուցանիշի դեպքում, ինչպիսին է քաղաքական ուժերի ներկայացվածությունը «հյուր տաղավարում»/թոքշոու/հարցազրույց ձևաչափի հաղորդումներում: Հետազոտվող հեռուստաալիքները հիմնականում ձգտում էին արտացոլել նախընտրական մրցավազքի մասնակիցների բազմազանությունը: Որոշակի բացառություն է կազմել **«Կենտրոնը»**, որի հաղորդումներին **մարտի 5-31-ը** Ծառուկյան դաշինքի ներկայացուցիչները հրավիրվել են 16 անգամ (այստեղ և այսուհետև հաշվի են առնվել նաև հետազոտվող երեկոյան եթերում նույն հաղորդումների կրկնությունները): Այնուհետև գալիս են Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան դաշինքը (ՕԲՕ)՝ 12 և ՀՅԴ-ն՝ 9 անգամ: Ցանկը եզրափակում է ՀԿԿ-ն,

որի ներկայացուցիչները 3 անգամ են հրավիրվել: Մյուս հեռարձակողների դեպքում «հյուր տաղավարում»/թոք-շոու/հարցազրույց ձևաչափի հաղորդումներում կուսակցությունների/դաշինքների ներկայացուցիչների մասնակցության հաճախության տարբերությունը ավելի փոքր է եղել: Պաշտոնական նախընտրական քարոզարշավի ընթացքում այս ձևաչափի հաղորդումներում նախընտրական պայքարի անմիջական մասնակից չհանդիսացող անձանց՝ փորձագետների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը չափազանց հազվադեպ է եղել: Այս հանգամանքը հանգեցրեց ընտրական գործընթացի, դրա մասնակիցների նախընտրական ծրագրերի վերլուծության և մեկնաբանությունների պակասի, ինչը մի շարք դիտորդներ բազմիցս ընդգծել են որպես քվեարկությունից առաջ ընտրազանգվածի լիարժեք կողմնորոշմանը խոչընդոտող գործոն:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋԱՐՇԱՎԻ 27 ՕՐԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**


հետազոտվող հինգ հեռուստաալիքների եթերում ի հայտ է եկել էթիկայի կանոնների 34 խախտում արտահայտությունների/տեսադրվագների մակարդակում: Ընդ որում, այդ խախտումների ինտենսիվությունը քարոզարշավի երկրորդ կեսին էականորեն աճել է: Այս անցանկալի քանակական դինամիկայի պատճառներից մեկը ՀՀ առաջին նախագահ և Կոնգրես-ՀԺԿ կուսակցությունների դաշինքի ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանի մասնակցությունն է եղել 2017թ. մարտի 21-ին ՀՀ-ի «Օրակարգից դուրս» և 2017թ. մարտի 28-ին «Կենտրոնի» «Ուրվագիծ» (22.35-ի թողարկում և 2017թ. մարտի 30-ի 23.55-ի կրկնություն) բանավիճային հաղորդումներին: Այստեղ հաղորդումների հյուրը, ՀՀԿ-ից բացի մյուս բոլոր մրցակիցների հասցեին հնչեցրեց իրենց կտրուկությամբ վիրավորականի հասնող արտահայտություններ: Լևոն Տեր-Պետրոսյանին ուղղված յուրօրինակ պատասխան կարելի է համարել հետազոտվող հեռուստաալիքների եթերում Կոնգրես-ՀԺԿ դաշինքին նշանային բնութագրիչներով անդրադարձների հարաբերակցությունը՝ 12 բացասական և զրո դրական: Դրանք մեծ մասամբ դարաբաղյան հարցում այս դաշինքի և նրա ղեկավարի դիրքորոշման արձագանքն էին:

Մեկ այլ օրինակ, երբ նույն հաղորդման հյուրերն իրենց վիրավորական արտահայտություններով պատճառ դարձան էթիկայի մի քանի կանոնների խախտումների արձանագրման, «Կենտրոնի» 2017թ. մարտի 20-ի «Ուրվագիծ» հաղորդումն էր (ժամը 22.35-ի թողարկում)՝ Կոնգրես-ՀԺԿ դաշինքի, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության և Ելք դաշինքի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Վերը հիշատակված դեպքերում հեռարձակողներն իրենք, որպես կանոն, չեն կարող կրել էթիկայի խախտումների պատասխանատվությունը: Մինչդեռ «Երկիր Մեդիայի» «Դիտակետում» լրատվական-վերլուծական հաղորդման թողարկումներում վարողի հանդիմանական (առանց կոնկրետ հասցեատիրոջ դիմելու) տեքստի կամա թե ակամա համադրումը նախընտրական պայքարի մասնակիցներին ցույց տվող տեսանյութի հետ, թույլ է տալիս խոսել հենց նյութի հեղինակների կողմից էթիկայի խախտման մասին:

**ԳՐԱՖԻԿ 7. Մասնագիտական էթիկայի սկզբունքների խախտումները կուսակցությունների/դաշինքների մասին արտահայտություններում/տեսադրվագներում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում**

2017թ. մարտի 5-31



Ընդհանուր առմամբ, **նախընտրական քարոզարշավի ընթացքում** էթիկայի կանոնների խախտումների հիմնական մասը արտահայտությունների/տեսադրվագների մակարդակում արձանագրվել է հետազոտվող հինգ ալիքներից երեքի մոտ. **«Երկիր Մեդիա»**՝ 13, **«Կենտրոն»**՝ 12, **Հ1**՝ 8: **«Արմենիայում»** արձանագրվել է 1 խախտում, իսկ **«Շանթում»** խախտում չի եղել:

Դրանից բացի, բավական բնորոշ էին էթիկայի կանոնների խախտումները ամբողջ նյութի մակարդակում: Ամենատարածված խախտումներից մեկը տարբեր հեռուստատալիքներում նախընտրական միջոցառման միևնույն տեսագրության օգտագործումն էր (26 դեպք): Մի շարք դեպքերում հետազոտվող հինգ հեռուստատալիքներից 4-ում օգտագործվել է նույն տեսագրությունը, ճիշտ է, տարբեր տևողությամբ: Բանն այն է, որ խմբագրական լուսաբանումը պետք է սկզբունքորեն տարբերվի քարոզչական նյութերից, որոնք, որպես քաղաքական գովազդ, տրամադրվում են կուսակցությունների/դաշինքների կողմից: Հեռուստատալիքները ԶԼՄ-ից ակնկալում է նրա սեփական լուսաբանումը և ոչ թե մեկ ուրիշի, օրինակ, նույն կուսակցության/դաշինքի կամ այլ հեռարձակողի կողմից պատրաստված մեկնաբանությունը:

Եթե նախորդ համապետական ընտրություններում այս երևույթի տակ դիտարկվում էր թաքնված գովազդի հնարավորություն (նախընտրական շտաբների տրամադրած նյութերի օգտագործումը), ապա այս տարի խոսքը, հավանաբար, հեռարձակողների միջև «բարտերի» մասին է, որոնք իրար հիմնականում Հայաստանի մարզերում նախընտրական միջոցառումների տեսագրություններ էին փոխանցում: Հաշվի առնելով առանձին հեռուստաալիքների որոշակի մտերմությունը կոնկրետ կուսակցությունների հետ և հենց նրանց միջոցառումների նկատմամբ հատուկ ուշադրությունը, այս «բարտերում» մյուսների նկատմամբ որոշակի առավելություն են ստացել Ծառուկյան դաշինքը և ՀՅԴ-ն: Մի կողմից, հաշվի առնելով հայաստանյան հեռարձակողների սահմանափակ ռեսուրսները, այսպիսի փոխանակության բացառումը չարդարացված մաքսիմալիստական մոտեցում կլիներ: Սակայն, մյուս կողմից, հեռուստաալիքների խմբագրություններին կարելի է խորհուրդ տալ՝ առաջին հերթին հետևել նախընտրական պայքարի բոլոր մասնակիցներին հավասար հնարավորություններ տալու սկզբունքին, այնուհետև՝ առավել ուշադրություն դարձնել նյութերը չեզոք ներկայացնելուն և երրորդ՝ նշել փոխ առնված տեսագրությունների և տեքստերի իրական հեղինակներին:


Քարոզարշավի անցկացմանը բնորոշ է թիկակական կանոնների մեկ այլ խախտում, որը նաև արտացոլվել է ՋԼՄ-ների լուսաբանման վրա, դարձել է երեխաների օգտագործումը քարոզչության մեջ, ինչը հակասում է քաղաքական պայքարի անցկացման միջազգային բոլոր չափանիշներին: Բնականաբար, հեռարձակողներն իրենք միշտ չէ, որ կարող են, առանց նախընտրական միջոցառման մասին պատմող ռեպորտաժին վնաս հասցնելու, բացառել երեխաների մասնակցությամբ դրվագների ցուցադրումը: Այդ պատճառով, սրա պատասխանատվությունն առաջին հերթին կուսակցությունները/դաշինքներն են կրում: ***Պաշտոնական նախընտրական քարոզարշավի ընթացքում*** ընդհանուր առմամբ արձանագրվել է 70 նյութ, որոնցում երեխաները հանդես էին գալիս քարոզչության մասնակցի դերում: Բոլորից հաճախ՝ 21-ի եթերում՝ 24 նյութ: Այնուհետև հաջորդում են «Շանթը» և «Կենտրոնը» համապատասխանաբար 17 և 16 նյութ, «Երկիր Մեդիան»՝ 10: Հետագոտված մյուս հեռարձակողներից երեխաների մասնակցությամբ ամենաքիչ դրվագներ հանդիպել են «Արմենիայի» եթերում՝ 3 նյութ: Կոնկրետ քաղաքական ուժերի աջակցող երեխաներ հայտնվել են 9 կուսակցություններից/դաշինքներից 6-ի նախընտրական միջոցառումների մասին նյութերում: 19 նյութում նրանք քարոզում էին ՀՀԿ-ի օգտին, 14-ական անգամ՝ Ծառուկյան դաշինքի և «Հայկական վերածնունդ» կուսակցության, 10 և 9 անգամ՝ համապատասխանաբար՝ Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան և Կոնգրես-ՀԺԿ դաշինքների և 4 անգամ՝ ՀՅԴ-ի օգտին: «Ազատ դեմոկրատներ» կուսակցության, Ելք դաշինքի և ՀԿԿ-ի նախընտրական միջոցառումների մասին ռեպորտաժներում նման դրվագներ ոչ մի անգամ չեն արձանագրվել:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻՑ ԴՈՒՐՄ** քաղաքական մրցակցության կարգավորման մեխանիզմների պակասն անդրադարձել է նաև եթիկայի կանոնների խախտման հաճախության վրա: Այդ երկու շաբաթների ընթացքում, ***փետրվարի 15 - մարտի 4***, հինգ հեռուստաալիքների եթերում արձանագրվել է այդպիսի 31 խախտում: Միայն մեկ դեպքում է խախտողը եղել նյութի հեղինակը, մյուս բոլոր դեպքերում դրանք այլ անձինք են եղել: Երբ ՋԼՄ-ները ակամայից հայտնվում են հայելու դերում, որն արտացոլում է քաղաքական գործիչների ոչ եթիկական վարքը կամ փոխանցում է նրանց (կամ նրանց հասցեին) արված ոչ եթիկական

արտահայտությունները, նրանք, որպես կանոն, չեն կարող դրա համար պատասխանատվություն կրել: Սակայն որոշակի հանգամանքներում ՁԼՄ-ները/լրագրողները, եթե նույնիսկ չեն հանդիսանում էթիկայի կանոնների խախտում պարունակող բովանդակության անմիջական տարածողը, չեն կարող դիտարկվել որպես պասիվ, անաչառ կողմ: Համապատասխան նախադեպն արձանագրվել է «Կենտրոնի» եթերում: 31 խախտումներից 21-ը բաժին են ընկել հենց այս հեռուստաալիքին, ընդ որում դրանցից 11-ը վերաբերում էին նույն թեմային: Դա Ծառուկյան դաշինքի տարբեր ներկայացուցիչների և համակիրների չափազանց կտրուկ, նույնիսկ վիրավորական արձագանքն էր Ծառուկյան դաշինքի նախընտրական ծրագրի 15 կետերի կապակցությամբ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության թեկնածուների քննադատությանը: Երկու քաղաքական ուժերի միջև հակասությունների նման լուսաբանումը բացահայտում է հեռուստաալիքի ակնհայտ կողմնապահությունը:

**ԳՐԱՖԻԿ 8. Մասնագիտական էթիկայի սկզբունքների խախտումները կուսակցությունների/դաշինքների մասին արտահայտություններում/տեսադրվագներում նախընտրական քարոզչության նախաշեմին**

2017թ. փետրվարի 15 - մարտի 4



**ՀԱՐԿ Է ՆՇԵԼ**, որ էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ մշտադիտարկման խմբի բոլոր դիտողություններն ու մեկնաբանությունները բացառապես խորհրդատվական բնույթ ունեն և չեն կարող հանգեցնել իրավական հետևանքների: Էթիկական խնդիրների հաղթահարումը պայմանավորված է ՁԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի, ինչպես նաև՝ ընդհանուր առմամբ հանրային քաղաքականության մշակույթի բարելավման անհրաժեշտությամբ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ներում ՀՀ Ազգային ժողովի 2017թ. ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումն իրականացրել է Երևանի մամուլի ակումբը՝ «Հայաստանի հեռարձակվող լրատվամիջոցներում ՀՀ 2017թ. խորհրդարանական ընտրությունների լուսաբանման ժամանակ էթիկական կանոնների խթանում» ծրագրի շրջանակներում՝ Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության Ծրագրային համագործակցության կառուցակարգի «Մասնագիտական և պատասխանատու լրագրության խթանում՝ ինքնակարգավորման մարմինների տարածաշրջանային ցանցին աջակցելու միջոցով» տարածաշրջանային ծրագրի օժանդակությամբ:

Մշտադիտարկումն իրականացվել է երկու փուլով. *առաջին փուլն* ընդգրկել է 2017թ. փետրվարի 15-ից մարտի 4-ն ընկած ժամանակահատվածը (նախընտրական քարոզչության նախաշեմ), *երկրորդ փուլը՝* 2017թ. մարտի 5-31-ը (նախընտրական քարոզչության ժամանակահատվածը):

**Մշտադիտարկման խնդիրներն էին** քանակական և որակական տվյալների վերլուծության միջոցով պարզել և սահմանել.

- ՀՀ Ազգային ժողովի 2017թ. ընտրությունների նկատմամբ Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ների ուշադրության աստիճանը,

- որքան ազատ, անկողմնակալ և էթիկական նորմերին հետևելով են Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ները համապետական ընտրական ցուցակներով խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների/դաշինքների մասին տեղեկություններ տրամադրում ընտրազանգվածին, ապահովում նրանց մուտքը եթեր՝ իրենց հայացքների, կարծիքների արտահայտման համար՝ դրանով իսկ նպաստելով ընտրողների կողմից ինքնուրույն և գիտակցված ընտրության կատարմանը,

- որքանով են լրատվամիջոցները հետևել նախընտրական քարոզարշավի լուսաբանումը կարգավորող օրենսդրության դրույթներին,

- որքանով են լրատվամիջոցները 2017թ. ՀՀ խորհրդարանական ընտրությունները լուսաբանելիս հետևել կարգավորող էթիկայի համընդհանուր նորմերին և համապատասխան երաշխավորություններին:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են քանակական և որակա-քանակական չափումներն ու հաշվարկը:

Քանակական չափումները ներառում էին հեռուստատեսային բովանդակության միավորների և ծավալների գուտ թվաքանակական հաշվարկները: Որակա-քանակական չափումները հիմնվում էին բովանդակության այն միավորների հաշվարկի վրա, որոնք

մշտադիտարկողների կողմից որոշակի վերլուծության են ենթարկվել:

Մշտադիտարկման տվյալների արձանագրումը կատարվել է երեք մակարդակում՝ հեռուստանյութերում՝ համապետական ընտրական ցուցակներով ՀՀ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին անդրադարձների ձևը և բնույթը, հեռուստանյութերում կուսակցություններին/դաշինքներին հատկացված եթերային ժամանակի ծավալը, հեռուստանյութերում կուսակցությունների/դաշինքների մասին արտահայտությունները և տեսադրվագները՝ մասնագիտական էթիկայի սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

**Մշտադիտարկումն ընդգրկել է 5 համազգային հեռուստաալիք.**

- Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն» և «Շանթ»:

**Վերոնշյալ հեռուստաալիքներում** հետազոտման են ենթարկվել երեկոյան փրայմ-թայմին (18.00-00.00) հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Մշտադիտարկման չեն ենթարկվել նախընտրական քարոզչության, առևտրային/սոցիալական գովազդի/հայտարարությունների ներծրագրային բլոկները, ինչպես նաև՝ վազող տողը:

**Մշտադիտարկման առարկա** են եղել բոլոր այն հեռուստանյութերը, որոնցում անդրադարձ կար համապետական ընտրական ցուցակներով ՀՀ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին:

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստանյութն** էր:

*Հեռուստանյութ ասելով հասկանում ենք.*

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

**ա.** լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

**բ.** հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

**գ.** հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ (միջարկում, բլում և այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

դ. սյուժեների ներծրագրային ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,

ե. հեռուստասյուժեին (ռեպորտաժին և այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրև այդ սյուժեի (ռեպորտաժի և այլն) մաս:

Ընդամին.

- **Լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերը** բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,

- **Հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները** դիտարկվել են հետևյալ կերպ.

1. եթե հաղորդումը նվիրված էր առանձին թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,

2. եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

II. Մշտադիտարկողներն օրական արձանագրում էին հետազոտվող եթերի տևողությունը՝ 18.00-00.00-ին հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **18.00**-ին, չեն դիտարկվել, մշտադիտարկումն սկսվել է տվյալ հաղորդման ավարտից հետո: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **00.00**-ին, դիտարկվել են ամբողջությամբ, մինչև դրանց ավարտը:

Մոնիտորինգի **չեն ենթարկվել**.

- նախընտրական քարոզչության բլոկները,

- առևտրային/սոցիալական գովազդը/հայտարարությունները,

- վազող տողը:

III. Մշտադիտարկման ընթացքում **պարզվել** և **արձանագրվել են**.

1. **Հեռուստանյութերում կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների քանակն ու ձևը**

Մշտադիտարկողները պարզել և համապատասխան սյունակներում արձանագրել են հեռուստանյութերում կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների առկայությունն ու ձևը:

Ընդ որում, կուսակցության **ղեկավարներ** ասելիս հասկանում ենք.

1. **համապետական ընտրական ցուցակներում առաջին երեք տեղերն զբաղեցրած անձանց,**

2. **պաշտոնապես դաշինքներ կազմած կուսակցությունների առաջին դեմքերը՝** անկախ համապետական ընտրական ցուցակներում նրանց զբաղեցրած տեղից:

Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին **անդրադարձների ձևը** տարբերակվել է հետևյալ կերպ.

**Ա.** կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին **ամբողջությամբ** նվիրված նյութ.

Նյութը համարվում էր կուսակցությանը/դաշինքին ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ կուսակցության/դաշինքի, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների, բայց այդ անդրադարձը **ածանցյալ** բնույթ ուներ: Ընդ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ կուսակցության/դաշինքի, ապա տվյալ կուսակցությունը/դաշինքը նույնպես նշվում էր համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձևից (մասնակի կամ հիշատակում):

**Բ.** կուսակցությանը/դաշինքին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին **մասնակի** նվիրված նյութ.

Նյութը համարվում էր կուսակցությանը/դաշինքին մասնակի նվիրված, եթե նրանում **հավասարապես** կար անդրադարձ մեկ այլ կուսակցության/դաշինքի կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների: Ընդամին, եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ երկու և ավելի կուսակցությունների/դաշինքների, ապա այդ կուսակցություններից/դաշինքներից յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

**Գ.** նյութ, որում **հիշատակվում** էին կուսակցությունները/դաշինքները/նրանց ղեկավարները.

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում կուսակցությունը/դաշինքը/նրա ղեկավարները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագրություն չէր տրվում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաև կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների (**համապետական ընտրական ցուցակի առաջին երեք դեմքերը, ինչպես նաև՝ դաշինք կազմած կուսակցության առաջին դեմքը**) երևալը հեռուստատեսային կադրում: Եթե կադրում երևալը այն նյութի մաս էր կազմում, որն արդեն իսկ պարունակում էր ամբողջությամբ կամ մասնակի անդրադարձ տվյալ կուսակցությանը/դաշինքին/նրա ղեկավարներին, ապա որպես լրացուցիչ հիշատակում այն չի արձանագրվել: Եթե կուսակցությունների/դաշինքների/նրանց ղեկավարների կադրում երևալը տեղի է ունեցել այնպիսի նյութում, որում նրանց անդրադարձ չի եղել,

ապա այն դիտարկվել է որպես առանձին հիշատակում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաև այն նյութերը, որոնցում արձարծվել է արտասահմանյան այն կուսակցության գործունեությունը, որն ընդհանուր ծագում և պատմություն ունի դիտարկման առարկա հանդիսացած համանուն կուսակցության հետ, բայց միևնույն ժամանակ ոչինչ չի ասվել հայաստանյան համանուն կուսակցության հետ արտասահմանյան այդ կուսակցության կապի մասին:

Կուսակցության/դաշինքի ղեկավարների (կուսակցության ընտրական ցուցակում առաջին երեք տեղերը զբաղեցնողներ կամ դաշինք կազմած կուսակցության առաջին դեմք) ցանկացած երևալը հեռուստանյութում դիտարկվել է որպես անդրադարձ այդ կուսակցությանը/դաշինքին՝ անկախ նրանից, թե ինչ դերում են այդ անձինք հանդես եկել (նույնիսկ եթե նրանք նյութում ներկայացվել են որպես իրենց ոչ կուսակցական պաշտոնական կամ մասնագիտական պարտականությունները կատարող): Հետևաբար, նման անդրադարձը հետազոտվել է վերոթվարկյալ և ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձևն ու բնույթը, եթերաժամանակը):

Կուսակցության/դաշինքի այլ ներկայացուցիչների դեպքում անդրադարձը (դրա ձևը, բնույթը և եթերաժամանակը) արձանագրվում էր միայն այն ժամանակ, երբ նրանց՝ կուսակցությանը/դաշինքին պատկանելությունը նյութում որևէ կերպ ընդգծվում էր:

Ընտրությունների պահին Հայաստանում կառավարող կոալիցիային ցանկացած անդրադարձ, անկախ այն բանից՝ նյութում բացահայտվել են, թե ոչ կոալիցիայում ընդգրկված կուսակցությունները, դիտարկվել է որպես անդրադարձ երկու կոալիցիոն կուսակցություններին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությանը, Հայ Յեղափոխական Դաշնակցությանը, հետևաբար, հետազոտվել է վերոթվարկյալ և ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձևն ու բնույթը, եթերաժամանակը):

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների/ներկայացուցիչների միայն մեկ անդրադարձ և դրա միայն մեկ ձև:

Այս կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

**2. Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների բնույթը հեռուստանյութերում**

Մշտադիտարկողները պարզել և համապատասխան սյունակում արձանագրել են հեռուստանյութում կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների/ներկայացուցիչների անդրադարձների բնույթը՝ *դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0)*:

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին նյութերում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի մոտ կուսակցության/դաշինքի կամ նրա ղեկավարների/ներկայացուցիչների մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Եթե նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր որպես չեզոք: Մշտադիտարկողի բոլոր

կասկածները նույնպես մեկնաբանվում էին հոգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հաղորդվում էր այն մասին, որ որևէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է ՀՀ խորհրդարանական ընտրություններում այս կամ այն կուսակցությանը/դաշինքին սատարելու/չսատարելու մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների/ներկայացուցիչների միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

**3. Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված հեռուստանյութերի եթերաժամանակը**

Եթե նյութն ամբողջությամբ կամ մասնակի էր նվիրված կուսակցությանը/դաշինքին, ապա դիտարկողները պարզել և արձանագրել են այն *եթերաժամանակը*, որը տրամադրվել է կուսակցությանը/դաշինքին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաև այլ անձանց՝ նրանց մասին իրենց դատողություններն ու պատմությունները ներկայացնելու համար:

Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի չափումն իրականացվում էր հետևյալ սկզբունքով.

1) եթե նյութն ամբողջությամբ նվիրված էր այս կամ այն կուսակցությանը/դաշինքին, ապա դրա ողջ եթերաժամանակը մշտադիտարկողները վերագրել են տվյալ կուսակցությանը/դաշինքին,

2) եթե կուսակցությանը/դաշինքին նվիրվում էր նյութի միայն մի մասը, ապա մշտադիտարկողները տվյալ կուսակցությանը/դաշինքին են վերագրել եթերաժամանակի միայն այն մասը, որը նվիրված էր նրան,

3) եթե կուսակցությանը/դաշինքին (անվանենք այն X) ամբողջությամբ նվիրված նյութում բերվում էին մեկ այլ (X կուսակցությունից/դաշինքից տարբեր) կուսակցության/դաշինքի (անվանենք այն Y) արտահայտությունները կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին (*առանց X-ի հետ համեմատության*), ապա Y-ին է վերագրվել նյութի այդ մասի համապատասխան եթերաժամանակը,

4) եթե X կուսակցությանը/դաշինքին ամբողջությամբ նվիրված նյութում ներկայացվում էին նրա արտահայտությունները մի այլ՝ Y կուսակցության/դաշինքի մասին կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին կամ՝ այլ անձանց դատողությունները,

պատմությունները Y-ի մասին՝ *X-ի համեմատությամբ*, ապա այդ նյութի էթերաժամանակի *համապատասխան հատվածի 50-ական տոկոսը* մշտադիտարկողները վերագրել են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվել է *վայրկյաններով*:

**4. Հեռուստանյութերում կուսակցությունների/դաշինքների/ նրանց ղեկավարների/ներկայացուցիչների մասին արտահայտությունների և տեսադրվագների գնահատականը՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով ամրագրված մասնագիտական էթիկայի սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից**

Մշտադիտարկողները գնահատում և արձանագրում էին մասնագիտական էթիկայի չափանիշների խախտումը կուսակցությունների/դաշինքների/նրանց ղեկավարների/ներկայացուցիչների մասին արտահայտություններում և տեսադրվագներում (տեսադրվագ ասելով այս հետազոտության մեջ հասկանում ենք խոսքով չուղեկցվող հեռուստատեսային կադրը): Ընդ որում, գնահատվում էին նաև իրենց՝ կուսակցությունների/դաշինքների/նրանց ղեկավարների/ներկայացուցիչների արտահայտությունները:

Որպես հիմք են ծառայել [Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով](#) ամրագրված սկզբունքները, որոնց դրույթները կիրառելի են արտահայտություններ և տեսադրվագներ գնահատելիս.

- Սկզբունք 1. Ճշգրտություն և անկողմնակալություն (մասնավորապես, 1.3, 1.5 և 1.6 կետերը)

- Սկզբունք 4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ (մասնավորապես 4.1, 4.3, 4.5, 4.6 և 4.7 կետերը)

- Սկզբունք 5. Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների և համամարդկային արժեքների նկատմամբ (մասնավորապես 5.1-ից 5.4 կետերը)

- Սկզբունք 7. Ազնվություն ընտրությունները և հանրաքվեները լուսաբանելիս (մասնավորապես 7.1, 7.2, 7.3 և 7.5 կետերը):

Կուսակցությունների/դաշինքների/ նրանց ղեկավարների/ներկայացուցիչների մասին արտահայտություններում/տեսադրվագներում էթիկական սկզբունքների խախտման առկայության դեպքում նշվում էր նաև, թե ով է կատարել այդ խախտումը.

1. Հաղորդումը վարողը/նյութի հեղինակները,

2. Այլ անձինք (նյութերի հերոսներ, հաղորդումների մասնակիցներ, հարցազրույց տվողներ, մեջբերվող անձինք և այլն):

Ընդամին, «Այլ անձինք» կատեգորիայի մեջ մտնում էին նաև լրատվամիջոցների այն

ներկայացուցիչները և այն լրագրողները, որոնք, չհանդիսանալով վարող/հեղինակ, նյութում/հաղորդման մեջ հանդես էին գալիս որպես հերոս/մասնակից:

Բացի դրանից, ընդհանուր առմամբ, հեռուստանյութերը գնահատվել են նաև մասնագիտական չափանիշներին համապատասխանության տեսանկյունից: Վերը թվարկված սկզբունքներից բացի, դրանք են.

- Սկզբունք 2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում
- Սկզբունք 3. Խմբագրական անկախություն
- Սկզբունք 6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում:

#### IV. Հետազոտված հաղորդումների մասնակիցների արձանագրումը

Հետազոտվող հեռուստաալիքի երեկոյան փրայմ-թայմին (18.00-00.00) առանձին ցուցակով մշտադիտարկողները արձանագրել են *«հյուր ստուդիայում»/թոք-շոու/հարցազրույց* ձևաչափի տարբեր ուղղվածության հաղորդումների (այդ թվում, տվյալ ձևաչափի առկայության պարագայում, լրատվական ծրագրերի) մասնակիցներին: Ցուցակում նշվել են հաղորդման անվանումը, հրավիրված մասնակիցների անունը (-ները)/պաշտոնը (-ները):

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ  
ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ԴԱՇԻՆՔՆԵՐԸ**

Սույն մշտադիտարկման առարկա են դարձել հինգ կուսակցություն և չորս դաշինք, որոնք ՀՀ ԿԸՀ-ում գրանցվել են ՀՀ 2017թ. խորհրդարանական ընտրություններին համապետական ընտրական ցուցակներով մասնակցելու համար:

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ  
ՆԵՐԱՌՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ԴԱՇԻՆՔՆԵՐԸ,  
ՈՐՈՒՔ ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ  
ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՎ\***

1.	«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն. Խաչատուր Քոքոբեյան, Հրանտ Բազրատյան, Ստյոպա Սաֆարյան
2.	Ելք դաշինք. Էդմոն Մարուքյան, Արամ Սարգսյան, Նիկոլ Փաշինյան
3.	Ծառուկյան դաշինք. Գագիկ Ծառուկյան, Իշխան Զաքարյան, Նաիրա Զոհրաբյան
4.	Կոնգրես-ՀԺԿ կուսակցությունների դաշինք. Լևոն Տեր-Պետրոսյան, Ստեփան Դեմիրճյան, Լևոն Զուրաբյան
5.	«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն. Արմեն Ռուստամյան, Ադվան Վարդանյան, Դավիթ Լոքյան
6.	Հայաստանի կոմունիստական կուսակցություն. Տաճատ Սարգսյան, Վազգեն Սաֆարյան, Գագիկ Մանուկյան
7.	Հայաստանի Հանրապետական կուսակցություն. Վիգեն Սարգսյան, Տարոն Մարգարյան, Արփինե Հովհաննիսյան
8.	«Հայկական վերածնունդ» կուսակցություն. Արթուր Բաղդասարյան, Միեր Շահգեղյան, Հեղինե Բիշարյան
9.	Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան դաշինք. Սեյրան Օհանյան, Արմեն Մարտիրոսյան, Վարդան Օսկանյան

\*Ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով:

**ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԴԱՇԻՆՔՆԵՐ ԿԱԶՄՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1.	<b>Ելք դաշինք.</b> «Լուսավոր Հայաստան» կուսակցություն «Հանրապետություն» կուսակցություն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
2.	<b>Ծառուկյան դաշինք.</b> «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն «Այլանս» կուսակցություն (նախագահ՝ Տիգրան Ուրիխանյան, ցուցակում՝ համար 7) «Առաքելություն» կուսակցություն ՀՀՇ (վարչության նախագահ՝ Արարատ Զուրաբյան, ցուցակում՝ համար 6)
3.	<b>Կոնգրես-ՀԺԿ կուսակցությունների դաշինք.</b> Հայ Ազգային Կոնգրես կուսակցություն Հայաստանի ժողովրդական կուսակցություն
4.	<b>Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան դաշինք.</b> «Ժառանգություն» կուսակցություն (վարչության նախագահ՝ Բաֆֆի Հովհաննիսյան, ցուցակում՝ համար 11)

## ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ

### ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ (Հ1) - 2001թ.

հիմնադրված Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն է: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Հ1-ի օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել. «Օրակարգ» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 21.00, մարտի 5-ից՝ երկուշաբթի-կիրակի՝ 21.00, մարտի 26-ին՝ 22.00), «360°» լրատվական-վերլուծական հաղորդումը (կիրակի օրերին՝ 21.00, հեռարձակվել է մինչև մարտի 5-ը), «Խորհրդարանական ժամ» լրատվական ծրագիրը (հետազոտված ժամանակահատվածում հեռարձակվել է մեկ հաղորդում՝ մարտի 1-ին, 22.22), «Օրակարգ. հարցազրույց» (հետազոտված ժամանակահատվածում հեռարձակվել է չորս հաղորդում՝ փետրվարի 20, 26, մարտի 6, 27) և «Օրակարգից դուրս» (շաբաթ օրերին, նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում հեռարձակվել է նաև այլ օրերի՝ մարտի 7, 9, 21, 23, 26, 29, 30 և 31) հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները:

